ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 07 >> ապրիլի 2015 թվական N: 56-Ա ք.Գյումրի

<<ՋԱՋՈՒՌԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾ ԲԱԺՆԵՏՈՄՍԸ ԲԱԺԱՆԵԼՈՒ, ՓՈԽԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2000 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 6-Ի N 118 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ կետի, 67-րդ հոդվածի 1-ին կետի <<ա>> ենթակետի և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. <<Ջաջուռի բժշկական ամբուլատորիա>> փակ բաժնետիրական ընկերության 2900000 Հայաստանի Հանրապետության դրամ անվանական արժեքով մեկ հատ հասարակ (սովորական) բաժնետոմսը բաժանել և փոխարկել 2900000 հատ հասարակ (սովորական) բաժնետոմսի, մեկ բաժնետոմսի արժեքը սահմանելով 1 Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2000 թվականի նոյեմբերի 6-ի <<Շիրակի մարզի թվով 47 առողջապահական ՊՓԲԸ-ների անվանափոխման և նրանց կանոնադրությունները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի պահանջներին համապատասխանեցնելու մասին>> N 118 որոշմամբ հաստատված <<Ջաջուռի բժշկական ամբուլատորիա>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.1-ին կետը հաստատել հետևյալ խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Հանձնարարել <<Ջաջուռի բժշկական ամբուլատորիա>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Եղիշե Խաչատրյանին՝ դիմել պետական ռեգիստրի գործակալություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցման համար:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Հովհաննես Հովհաննիսյանին:

Ֆ.ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի

2015 թվականի ապրիլի 7-ի N 56-Ա որոշման

<<ՋԱՋՈՒՌԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ (ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ)

Կանոնադրության 4.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

4.1 Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 2900000 Հայաստանի Հանրապետության դրամ, որը կազմում է 2900000 հասարակ (սովորական) բաժնետոմս: Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1 Հայաստանի Հանրապետության դրամ:

Բոլոր 2900000 հասարակ (սովորական) բաժնետոմսերը տեղաբաշխված են և պատկանում են հիմնադրին՝ Հայաստանի Հանրապետությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Խ.ՊՈՂՈՍՅԱՆ